

# ՀՀ Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանի շնորհավորական ուղերձը Վերջին դասի կապակցությամբ 22.05.2014



## Սիրելի՛ շրջանավարտներ

Ձերմորեն շնորհավորում եմ ձեզ դպրոցական ուսումնառության շրջանը ավարտելու կապակցությամբ:

Տոնական այս օրը հիշարժան է բոլորիդ համար: Շուտով հրաժեշտ կտաք պատանեկան տարիներին հարազատ դարձած ձեր սիրելի դպրոցին, որը ձեզ համար եղել է աշխարհաճանաչման մի յուրօրինակ միջավայր և ստացած գիտելիքներով կմտնեք կյանքի նոր փուլ, որտեղ պահանջվում է լինել առավել լուրջ և պատասխանատու: Դուք հրաժեշտ եք տալու նաև ձեր ուսուցիչներին, որոնք կրթելուց և դաստիարակելուց բացի, ձեր մեջ սերմանել են արժանապատիվ ապրելու կամք և հավատ ապագայի նկատմամբ:

Համոզված եմ, որ թե՛ դպրոցում, թե՛ ուսումնառության հետագա տարիներին ստացած գիտելիքները կօգնեն կյանքում ձեզ զգալ առավել հաստատուն և կայացած, դառնալ մեր պետության զարգացման առաջընթացի ակտիվ մասնակիցը և հուսալի ապագայի գրավականը:

Սիրելի՛ ուսուցիչներ, այսօր տոն է նաև ձեր համար: Ձեր տքնաջան, հետևողական աշխատանքով, նվիրվածությամբ և ծնողական հոգատարությամբ հասուն ու կազմակերպված ձեր սաներին կյանք եք ուղղորդում, հաստատ համոզված լինելով, որ նրանք իրենց հնարավորություններն ու կարողությունները ի նպաստ են բերելու մեր Հայրենիքի զարգացմանն ու հզորացմանը:

Կրկին շնորհավորելով վերջին դասի կապակցությամբ, մաղթում եմ հաջողություններ, նորանոր ձեռքբերումներ, նպատակների ու երազանքների իրականացում և ամենայն բարիք:

**ԼԱՎԱԳՈՒՅՆ ՅԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ՝ Ռ. ԱՐԱՅԱՄՅԱՆ  
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ**